բութեան իւիք և առնելոյ դատաստանի թողցէ թափուր խղջուկ ժողովրդոց, եթէ ոչ կարի մխիթարելով նոցա արձակել միայն 'ի կորուստ, այլ իշխանք նոցայ 'ի խորին դժոխս առ 'ի վրէժխընդիր, գիտելոյ զկամս Տեառն իւրեանց և ոչ առնելոյ, այլ ոչ է կամք իմ զի մուծանելով 'ի սիրտս ձեր երկիւղ դժոխային զի նովաւ հաւանեցուցանեմ ձեզ ընդունիլ Օրէնս կանոնաց եթէ ոչ ցուցանելով ձեզ յատկապէս բարութիւնն կանոնի սահմանի և վնասն անօրէնութեան վարուց որ արասցէ մեզ իբր մարդ 'ի պատուոյ և արժանի որդեգրութեան հօր, զի որոշեսցի բանականութիւնս մեր 'ի բնութենէ անասնոյ և գոցի զինքն ըստ բանին Տեառն այսինքն, որդիք աշխարհիս յայսմիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ, նայերուք բարեկամք զի փրկիչն մեր բարեգոյնն Քրիստոս որ զիտաց զկամս և զգործս և զբնութիւնս մեր նա ոչ իմաստնագոյն ասաց ամենայն մարդոյ թէ ոչ որդիք աշխարհիս յայսմիկ, ուրեմն այս է զանազանութիւն որդոյ և մարդոյ, որ պահելով պատիւ ազատութեան իւրոյ և հնարն կարգադրելոյ փոփոխական բնութեան իւրոյ՝ զտանին շնորհս որդեգրութեան որպէս կրկին ասաց՝ եւ նոցայ իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ, տես դու եթէ 'ի միջի ձեր և ըստ սովորութեան մերոյ ոմն հայր ռամիկ եթէ զտցի վատթարութիւն 'ի գործս որդոյ իւ-